

Օրբելյանի Պատմության ձեռագրերում ու հրատարակություններում, ուստի հատուկ ուսումնասիրության է արժանի ինչպես «Հերթ»-ի ինչ (բերդ, գավառ, գյուղաքաղաք) լինելը, այնպես էլ այդ տեղանվան գրության ճիշտ ձևն ու տեղագրությունը:

Մեզ հետաքրքրող տեղանունը Ստեփանոս Օրբելյանի Պատմության Օրբելյան իշխանատոհմին նվիրված ԿԶ (ԿԵ) գլխի հնագույն հրատարակություններում հանդիպում է Հեր ձևով³, նույնացվելով Պարսկահայքի Հեր գավառի հետ: Բնագրի այսօրինակ ընկալումը, սակայն, դեռևս անցյալ դարի կեսերին հիմնավորապես մերժեց Կարապետ Շահնաղարյանցը. «զՀերթն ընթէնու Սէն-Մարտեն Հեր ոչինչ գմտաւ ածեալ թէ՛ այսու անուամբ ոչ գոյր յԱրձախ, ի սահմանս Զարեքի, Գանձակայ եւ Շամքորի այլ բերդ բայց եթէ Հերթ կամ Հերդ, որ ունէր եւ գաւառ նոյնանուն, որ ի նոյն ժամանակս աստանդական թափառէր կաթողիկոսն Աղուանից Ստեփաննոս»⁴: Այսպիսով, միանգամայն ճիշտ է նկատվել, որ խնդրո առարկա տեղանունը ավելի շուտ մերձավորության եզրեր ունի Կիրակոս Գանձակեցու հիշատակած Հերդ, քան Պարսկահայքի Հեր գավառի հետ, որը երբեք չի մտել Զաքարյանների տիրույթների մեջ⁵: Իր կազմած բնագրում, սակայն, անվանի բանասերը գերադասությունը տվել է «Հերթ» ընթերցմանը⁶: Կարապետ Շահնաղարյանցի հրատարակությունից ընդամենը մեկ տարի առաջ Ստեփանոս Օրբելյանի Պատմության Օրբելիներին նվիրված գլուխը առանձին լույս տեսավ Մոսկվայում, որտեղ քննվող տեղանունը հանդիպում է «Հերք» ձևով⁷: Եվ վերջապես, Ստեփանոս Օրբելյանի Պատմության առավել նախընտրելի՝ Մկրտիչ էմինի իրականացրած հրատարակությունում, թեև բնագիր է ներմուծված «Հերթ»-ը, սակայն տարբերությունները հավաստում են նաև «Հերք» տարբերակի գոյությունը⁸: Այսպիսով, ձեռագրերը վկայում են մեզ հետաքրքրող տեղանվան գրության երեք ձև, ուստի տարբերությունների մեջ ընտրություն կատարելու համար անհրաժեշտ է դիմել նաև այլ աղբյուրների:

³ «Պատմութիւն մնացորդաց Հայոց եւ Վրաց», ի լոյս ածեալ տպիւք եւ ծախիւք Եղիազարու Շամիրեան կողմէն՝ աշխատակցութեամբ Մովսէսի Բաղդամեան հրահանգէին իւրոյ, Մազրաս, 1775—1776, էջ 24, J. Saint-Martin, Mémoires historiques et géographiques sur l'Arménie, t. II, Paris, 1819, p. 102: «Հեր» ընթերցումը վկայված է և վերոհիշյալ գլխի հին վրացերեն թարգմանությունում (ժԺ դ.), տե՛ս Նցոցեանտ Թոնելեանտ «Նցոցեանտ Թոնելեանտ»-ն ժցցլու խորտլու Թորգմանց, Գամոսե յ. Ընթերցում, ԹԺ, Եջ. 55.

⁴ «Պատմութիւն նահանգին Սիսական արարեալ Ստեփաննոսի Օրբելեան արքեպիսկոպոսի Սիւնեաց», ի լոյս ընծայեաց հանդերձ ծանոթութեամբ Կարապետ Շահնաղարեանց, հ. Բ, Փարիզ, 1859, էջ 331, «ժ. 69:

⁵ Նույն պատճառարանությամբ մերժելի է Հերդի նույնացումը Տուրքերանի Հարք գավառի Հերթ գյուղի հետ, որտեղից, ըստ Ասողիկի, ծագում էր Դավիթ Անհաղթը, տե՛ս История князей Орбелян, извлечение из сочинений Стефана Сюнийского, перевел с армянского Х. Иоаннесов, М., 1883, с. 65, прим. 78:

⁶ «Պատմութիւն նահանգին Սիսական...», էջ 137: «Հերթ» ընթերցումը ընդունել է նաև Մ. Բրոսսե, տե՛ս M. Brosset, Deux historiens Arméniens, 1-re livr., Kiracos de Gantzac Saint-Petersbourg, 1870, p. 89, n. 4.

⁷ «Ստեփաննոսի արքեպիսկոպոսի Սիւնեաց Պատմութիւն ի վերայ ծագման տոհմին Օրպէլեանց եւ ի վերայ յարձակման Թաթարաց ի Հայս», ի լոյս ընծայեալ յիսկանայ Տ. Գեորգեան Յովնանիսեանց, Մոսկվա, 1858, էջ 31:

⁸ «Ստեփաննոս Սիւնեաց եպիսկոպոսի Պատմութիւն տան Սիսական», ի լոյս ընծայեաց Մկրտիչ Էմին, Մոսկվա, 1861, էջ 287: «ԿԶ» (ԿԵ) գլխի ուսերին թարգմանությունում Մ. Էմինը տեղանունը տառադարձել է «Херт» ձևով, տե՛ս Н. О. Эмин, Исследования по армянской мифологии, археологии, истории и истории литературы (за 1858—1884 гг.), М., 1896, էջ 369.